

338(47)

7-91

187 FEB 2010

17 FEB 2010

338 (47)

Դ-91

8105 JUL 45

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍԵ

Սոցիալական Գաղափարական Գլխ. Վարչություն

№ 23 ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 23

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

60-ԱԿԱՆ ԹՎԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 1914 Թ.

Թ ա ր գ մ. Ս.Ն. ՍՏ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. - ՅԵՐԵՎԱՆ, 1927

24 JUL 2013

29185

338(47)

199

338(47)

17-91  
պ.

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍՑ  
Սոցիալական Դաստիարակության Գլխ. վարչություն

№ 23 ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 23

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ  
60-ԱԿԱՆ ԹՎԵՐԻՑ ՄԻՆՁԵՎ 1914 Թ.

1007  
3395-9

Թ ա ռ գ մ. Ա. Ն. Ս Տ.



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.—ՅԵՐԵՎԱՆ. 1927

**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ XIX Դ. 2-ՐԴ ԿԻՍՈՒՄ**

Ռուսաստանի՝ իբրև կապիտալիստական յերկրի առանձնահատուկ դրությունը, ինչպես նայել մեծ Հոկտեմբերյան հեղափոխության ու անցողիկ ժամանակաշրջանի՝ «ռազմական կոմունիզմի» յեվ ՆԵՊ-ի ինքնատիպությունը պայմանավորված է նրա արդյունաբերական կապիտալիզմի ու զարգացմամբ:

**Ֆրգյուցաբեհակաճ կապիտալիզմը զարգացումը 90-ական թվերին:** XIX դ. 90-ական թվերի կիսին Ռուսաստանն իրապես դառնում է կապիտալիստական յերկիր. 90-ական թվերին սկսում է ամրանալ բանվորական շարժումը, այդ շրջանում ահա հրապարակ է գալիս Ռուսաստանի Բանվորական Սոցիալ-Դեմոկրատական կուսակցությունը, և մարքսիզմը հաղթող է հանդիսանում նարոդնիկության հանդեպ:

Ներքևում բերած թվերը լուեյաջն ու բացահայտ ցուցադրում են արդյունաբերական կապիտալիզմի հարաճուն զարգացումը:

Մշակած արտադրանքների և շինվածքների արժեքը միլիոն ռուբլիներով\*.

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1887թ.	1890թ.	1893թ.	1896թ.	1897թ.
Թեյանյութային . . . . .	463	519	622	838	946
Մանրային մթերքներ . . . . .	375	392	400	628	648
Կենդանական մթերքներ . . . . .	79	74	78	117	135
Փայտի մշակում . . . . .	26	33	39	91	103
Գրենային արտադրություն . . . . .	21	24	28	45	45
Քիմիական » . . . . .	22	30	40	57	60
Քերամիկի » . . . . .	29	33	34	70	83
Ղեռնային և լեռնագործարանային . . . . .	156	203	249	339	394
Մետաղա-արդյունաբերություն . . . . .	113	128	171	284	311
Մնացած արտադրությունները . . . . .	51	67	74	121	118
<b>Ընդամենը . . . . .</b>	<b>1.335</b>	<b>1.503</b>	<b>1.735</b>	<b>2.590</b>	<b>2.840</b>

\* „Россия в конце XIX века“, изд. 1900. мин. фин., ст. проф. Лангового „Общие итоги русской промышленности“.

Իհարկե, վոչ աչս համեմատությամբ, բայց և այնպես բավական աճում է նաև բանվոր դասակարգը:

Նույն տարիներում բանվորների թիվը կազմում էր (հազարներով)\*.

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1887թ.	1890թ.	1893թ.	1896թ.	1897թ.
Թելանյութային . . . . .	399	433	498	546	643
Մանդային մթերքնե . . . . .	205	203	217	240	255
Կենդանական » . . . . .	39	40	44	63	64
Փայտի մշակում . . . . .	31	36	40	75	86
Գրենային արտադրություն . . . . .	19	27	34	35	46
Քիմիական » . . . . .	21	28	28	36	35
Քերամիկի » . . . . .	67	72	75	91	143
Լեռնային և լեռնադործարանային . . . . .	391	427	461	489	544
Մետաղա-արդյունաբերություն . . . . .	103	110	132	183	214
Մնացած արտադրությունները . . . . .	42	48	53	60	66
Ընդամենը . . . . .	1.317	1.424	1.582	1.818	2.096

Այսպես՝ տաս տարվա ընթացքում (1887 – 1897) ինդուստրիայի արտադրանքի արժեքն աճում է 113<sup>0</sup>/<sub>0</sub>, իսկ բանվորների թիվը՝ 59<sup>0</sup>/<sub>0</sub>:

Ուշագրություն արժանի չէ այն հանգամանքը, վոր ամենից խիստ աճել են այն ճյուղերը, վորոնք սպասարկում են հենց նույն արդյունաբերությանը, այսինքն՝ լեռնայինը, մետաղայինը, փայտամշակմանը, քերամիկինը և քիմիականը: Իսկ անմիջապես շուկայի համար աշխատող արտադրությունները՝ տեքստիլն ու սննդայինը, իրենց զարգացմամբ բավական յետ են մնացել վերեվ հիշած արտադրություններից:

Ծանր ինդուստրիան սկսում է արագ սրժայի աճումը: Ենթադրելով աճել, վորովհետև արդյունաբերությանն անհրաժեշտ են մեքենաներ, գործիքներ, պահեստի մասեր. հետզհետե զարգացող տրանսպորտը կարիք ունի ռելսերի, շոգեշարժերի, վագոնների, մետաղանավերի, առհասարակ մետաղների և հանքային վառելիքի:

Սակայն ծանր ինդուստրիան բավարարում է պահան-

\* Տես նույն զիջըր:

ջին վոչ թե սոսկ գործարանների թիվը ավելացնելով, այլ հիմնելով չեկրոպական տիպի նոր ձեռնարկություններ:

Տարիներ	Գործարան. թիվը	Բանվ. թիվը	Արտադր. միլիոն ո.
1856	29	3.000	2
1885	336	42.772	41
1890	412	49.000	52
1892	569	50.000	53
1896	680	93.860	136
1897	682	120.339	142

Այս աղյուսակը\* ցույց է տալիս, թե նախ ինչպես բուռն թափով էր աճում մետաղի արդյունաբերությունը 90-ական թվերի կիսից. չերկրորդ՝ թե ինչքան խոշոր գործարաններ են հիմնվել. 1885 թ. մի ձեռնարկությանն ընկնում էր 127 բանվոր և 122 հազար ռուբլու արտադրանք, այսինչ 1897 թ.՝ 176 բանվոր և 208 հազար ռուբլու արտադրանք: Յեթե ընդունենք, վոր 1885 թվին գործարանները 1896 թ. նույն գումարի արտադրանք ելին տալիս, ապա այդ շրջանում նոր առաջացած գործարանները տալիս ելին 276 հազար ռուբլու արտադրանք. հաշվելով 1892 – 1897 տարիներում հիմնված գործարանների արտադրողականությունը, գտնում ենք, վոր մի գործարանին ընկնում է 572 բանվոր և 732 հազար ռուբլու արտադրանք:

1900 թ. ֆինանսների մինիստրությունը հրատարակեց մի մեծ զիջը՝ «Ռուսաստանը XIX դարի վերջերին», վորի նպատակն էր ծանոթացնել արտասահմանի բուրժուազիային Ռուսաստանի տնտեսական վիճակի հետ և ուժեղացնել կապիտալների ներմուծումը: Այդ զրբում պրոֆ. Գատցուկը գրում է.

«Վերջին ժամանակ նկատելիորեն մասնագիտանում են շատ գործարաններ, ընդլայնվում են և հաճախակի

\* „Россия в конце XIX века“, изд. 1900 г. изд. мин. Фин., ст. проф. Гатцука.

անցնում բաժնետիրական ձեռնարկություններին: Արդյունաբերությունից վերջին տարիների ընդհանուր վերելքը շատ բարերար ազդեցություն ունեցավ մեքենային գործարանների վրա. աշխատանքով ծանրաբեռնված՝ լավ ոգուաներ էին ստանում, և շատ գործատերեր՝ ոգտվելով այդ հանգամանքից՝ ընդլայնում և բարելավում էին գործարանների միջոցները: Պետական գործարանները, սուսնձնապետ զինվորական և ծովային հիմնարկներինը, միջոցներ չէին խնայում ամենալավ մեքենաներ ձեռք բերելու համար: Առաջավոր գործարաններում բավական արագ կիրառվել է սկսում ելեկտրականությունն աշխատանքի մեջ»:

90-ական թվերից ուժեղանում է քարածխային արդյունաբերությունը\*:

Տարիներ	Բոլոր ավազաններից	Գոնբասսից
1860	18	6
1870	42	16
1880	201	86
1890	367	183
1895	535	294
1900	987	672

1900 թվին նավթի արդյունահանությունը ամենաբարձր չափերի հասավ նույնիսկ մինչ-պատերազմյան վերջին տարիների համեմատությամբ\*:

Տարիներ	Նավթի արդյունահանությունը միլիոն փթեթով
1885	116
1890	243
1895	431
1900	634

Յերկաթահանքային արդյունաբերությունը 1885-ից մինչև 1900 թ. զարմանալի արագ զարգանում է:

\* „Стат. ежег.“. Изд. Совета с'езда представит. пром. и торг. 1913 г.

Տարիներ	Ստացված է յերկաթահանք միլիոն փթեթով.	Բոլոր ուայոններից	Հարավ. ուայոն.
1870	46		1
1885	65		7
1890	106		23
1895	168		59
1900	367		210

Ավելի արագ աճում է մարզանեցի արդյունահանությունը\*:

Տարիներ	Ստացված է միլիոն փթեթով
1885	3,7
1890	11,1
1895	12,4
1900	49,0

Մետաղագործությունը, վոր կենտրոնացած էր մեծ մասամբ Ուրալում և աշխատում էր գործելիով, արագ ծաղկում է քարածխային հարավում, և հարավի չուգունի հալքը շատ ավելի արագորեն է աճում, քան այլ շինվածքների արտադրությունները:

Տարիներ	Միլիոն փթեթով հալված է.	Հարավ. ուայոն.	Ուրալում	Ընդամենը
1860	—		14,5	19,6
1885	2,4		21,6	31,0
1890	13,4		27,7	55,2
1895	33,6		33,1	86,8
1900	91,6		50,2	176,8

Բամբեսիրական լճերում և նաև բաժնետիրական ընդհանուր արդյունաբերության կենդանությունը կերությունների և խմբակցությունների խիստ աճումից:

\* „Стат. ежег.“. Изд. Совета с'езда представит. пром. и торг. 1913 г.

Հ ի մ ն վ ա ծ Ե ն

Տարիներ	Բաժնետ. ընկերութ.	Բաժնետ. խմբակց.
1851—1860	34	2
1861—1870	43	8
1871—1880	171	36
1881—1890	208	138
1891—1900	609	312

Մեզ թվում է, թե բերած թվերը միանգամայն բավական են ապացուցելու համար այն փաստը, վոր XIX դարի 90-ական թվերը Ռուսաստանի համար բեկման տարիներ են, վոր անցած դարի վերջից սկիզբ է առնում ըուն կապիտալիստական Ռուսաստանի կյանքը:

Հենց այդ տարիներում նարոդնիկությանը վերջնական հարված է հասցնում մարքսիզմը, իբրև զարգացած կապիտալիստական յերկրներում առաջ յեկած ուսմունք, իբրև պրոլետարիատի, ինքն իրեն գիտակցող հասարակական նոր դասակարգի ուսմունք:

Տրանսպորտի յեվ կապի գորգացումը: Անկասկած է, վոր արդյունաբերության զարգացմանը հետևում է ներքին և արտաքին առևտրի աճումը, տրանսպորտի, հաղորդակցության միջոցների և այլն ընդլայնումը:

Յերկաթուղագծեր շինված են վերստերով\*.

Տարիներ	Վերստ
Մինչ 1840	25
1841—1850	443
1851—1860	1.024
1861—1870	8.598
1871—1880	11.146
1881—1890	7.372
1891—1900	19.022

\* „Стат. ежег.“. Изд. Совета с'езда представ. пром. и торговли. 1913 г.

Շարժական մասեր շինված են.

Տարիներ	Շոգեշարժ	Մարդատար	Վ ա գ ո ն ն Ե ր
1885	6.317	7.244	132.762
1890	6.933	7.759	145.611
1895	8.123	10.075	180.371
1900	13.429	16.470	290.783

Ապրանքներ փոքր արագությամբ տեղափոխված են՝ 1885 թ. 164 միլիոն ուղբլու, 1890 թ.՝ 197 միլիոն ո., 1895 թ.՝ 275 միլիոն ո., 1900 թ.՝ 406 միլիոն ուղբլու:

Գետերի ճանապարհներով՝ նավերով ու լաստերով տեղափոխված է՝ 1890 թ. 1,1 միլիոն փուլ, 1895 թ.՝ 1,5 միլիոն փուլ, 1900 թ.՝ 2 միլիոն փուլ:

Ծովային շոգենավերի թիվը չորս տարվա ընթացքում (1896—1900 թ.) ավելացել է 35<sup>0</sup>/<sub>0</sub>, նրանց տարողությունը (տոննաժ)՝ 60<sup>0</sup>/<sub>0</sub>, կարողությունը ինդիկատոր ուժերով՝ 61<sup>0</sup>/<sub>0</sub>:

Վերջապես ուժեղանում է պոստ-հեռագրի գործունեությունը.—

Տարիներ	Հեռագրաթիկերի տարած. վերստ.	Հեռագրերի թիվ միլ.	Պոստային առարումների թիվը միլիոն.	Պաշտոնյաների թիվը հազարն.
1885	239	51	292	27,5
1890	278	57	384	28,5
1895	314	81	545	32,8
1900	465	105	849	40,3

Արտաքին առևտրի աճումը կատարվում է գլխավորապես ներմուծման (իմպորտի) հաշվին, վորովհետև արդյունաբերության նախնական զարգացումը սովորաբար ընթանում է այնպիսի պայմաններում, յերբ ներքին շուկան ընդարձակ է, և չկան մեքենաների, գործիքների, հում և ոժանդակ նյութերի (ֆերրո-հալիչներ, բարբետ, կապար և այլն) սեփական արտադրություններ:

Տարիներ	Արտահանում միլիոն ռուբլ.	Ներմուծում միլիոն ռուբլ.
1881—1885	550	528
1886 - 1890	630	415
1891—1895	625	469
1896 - 1900	698	609

Կապիտալիզմը գյուղում: Կապիտալիզմն ամրապնդվեց, բայց դեռ նոր երևույթ է իր բոլոր մագիլները չեր տարածել գյուղատնտեսության վրա: Գյուղը 1900 թ. համարյա մնացել էր 1885 թ. վիճակին, բացի ցորենի և գարու մշակույթից, վոր ուժեղ չափով արտահանվում էր արտասահման:

Հացի և այլ բույսերի բերքը Յեվրոպական Ռուսաստանի 50 նահանգներում միլիոն փթերով\*.

Տարիներ	Ցորեն	Հաճար	Գարի	Վուշ	Կանեփ	Ծխախ.
1885	277	1025	125	45	27	2,8
1890	332	984	203	38	19	3,2
1895	486	1113	279	59	36	3,3
1900	530	1285	249	52	32	3,3

Մի դեսիատինի բերքատվությունը 1893—1895 թ. թ. և 1896—1900 թ. թ. համեմատությամբ բարձրացել էր միայն 7<sup>0</sup>/<sub>0</sub>:

Մի դեսիատինի բերքը Յեվրոպական Ռուսաստանի 60 նահանգներում միլիոն փթերով\*.

Տարիներ	Ցորեն	Հաճար	Գարի	Վարսակ	Ընդամենը
1893—1895	38,9	43,9	48,5	38,0	41,9
1896 - 1900	40,3	47,4	44,0	44,4	44,6

Սակայն մեր ասածներից չպետք է յեզրակացնել, թե գյուղը բոլորովին զերծ էր մնում կապիտալիստական ազդեցությունից:

Ընկ. Լենինը իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» նշանավոր գրքում, քննության առնելով իր

\* „Տատ. ежегодник“.

ձեռքի տակ չեղած նյութերը, գրում էր. «Համեմատելով 1888—1891 թ. թ. և 1896—1900 թ. թ., տեսնում ենք գյուղացիության երսպրոպրիացիայի ավելացում: Ծխերի թիվը ավելանում է մեկ միլիոնով: Թեև քիչ, բայց պակասում է ձիերի թիվը: Ձի չունեցող ձիերի թիվը առանձնապես արագ ավելանում է, նրանց տոկոսը 27,3-ից հասնում է 29,2 տոկոսի: 5,6 միլիոն աղքատ գյուղացու (ձի չունեցող և մի ձիանոց) փոխարեն ունենք արդեն 6,6 միլիոն: Ծխերի թիվը ավելանում է բացառապես չքավորների հաշվին. հարուստների (ձի ունեցողների) տոկոսը պակասում է. 2,2 միլիոն բազմաձիատեր ձիերի փոխարեն մենք ունենք միայն 2 միլիոն\*:

XIX դարի վերջում ավելի արագ, քան հետ-ոնջորմյան Ռուսաստանի առաջին տասնամյակներում, հողատնտեսությունը բարձրնային (բեզառային) տնտեսությունից անցնում է կապիտալիստականին, վերանում է ստիպողական աշխատանքի սիստեմը (отрабочная система), ավելանում է վարձու աշխատանքը հողագործության մեջ յեվ ընդլայնվում է յերկրագործական մեքենաներ կիրառելու շրջանակը:

90-ական թվերից գյուղի բնատնտեսությունն արագորեն անցնում է առեվտրային տնտեսության, առաջ են գալիս առեվտրա-յերկրագործական ոայոններ, զարգանում է ծախու անասնապահությունը, տեխնիկական ըույսերի մշակույթը, ծիծանանքի, ուլա-շարապայինի գործարանները, արդյունաբերական բանջարաբուծությունն ու այգեգործությունը\*\*:

Կապիտալիզմը դեռ 90-ական թվերից առաջ սկսում է քայքայել բնատնտեսական գյուղը, միայն XIX դարի վերջին այդ պրոցեսն ավելի արագ ընթացք է ստանում, սակայն գյուղատնտեսության այդ վերակազմությունը

\* „Развитие капитализма в России“ Ленина. յեր. 106:  
\*\* Նույնը, III—IV գլուխները:

90-ական թվերին այն բուռն, հեղափոխական բնույթը չէր կրում, ինչ վոր տեղի ունեցավ արդյունաբերություն, տրանսպորտի, կապի և այլ բնագավառներում:

90-ական թվերից քաղաքի և գյուղի հակամարտությունը սրվում է գլխավորապես քաղաքների արագ ծաղկման շնորհիվ:

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ XX ԴԱՐՈՒՄ ՄԻՆՉ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

**Մանր ինքուստ- 1900 թվից Ռուսաստանը շարունակում**  
**սրբայի աճումը:** Ե բարգավաճել վորպես կապիտալիստական պետություն, և արդեն համաշխարհային պատերազմի նախորդյին նրան կարելի յեր համարել զարգացած կապիտալիզմի յերկիր—մեծ տեսակարար կշիռ ունեցող հետամնաց տնտեսություն մեջ, վորի դեմ նա պայքար էր մղում:

Իհարկե, այդ տարիներում ավելի լայն ծավալ են ստանում ծանր ինդուստրիայի ճյուղերը, հատկապես վառելիքի և մետաղի արդյունաբերությունը:

Մեծանում է վոն միայն արդյունահանությունը ածխի, նավթի, չուգունի հալքի, մարտինացումը, գլանացումը և այլն, այլ և նշանակությունն այն ուսյունների, վորոնք մինչ այդ յերկրորդական դեր էլին խաղում կամ վոն մի նշանակություն չունեցին:

**Ընդհանուր և բարձրագույն արդյունաբերության քաղաքների աճումը:** Յերկաթուղագծային յեռուն շինարարությունը և Ռուսաստանի հարավի ինքուստ արդյունաբերության մեծ զարկ տվին Դոնավազանի (Դոնբասսի) քաղաքային արդյունաբերության բուռն զարգացմանը, իսկ Սիբիրի արդյունաբերության և տրանսպորտի աճումը նույն հետևանքն ունեցավ Սիբիրի ածխահանքերի նկատմամբ: Պետք է ավելացնել, վոր Դոնբասսը (Դոնավազանը) իբրև յեվրոպական ձևի կապիտալիզմի արդյունք 1900—1913 տ. տ. աճել էր 132<sup>0</sup>/<sub>0</sub>, մինչ-

դեռ մնացած ուսյունները՝ միայն 124<sup>0</sup>/<sub>0</sub>: Չնայած այդ հանգամանքին, ռուսական արդյունաբերությանը քարածուխը չի բավարարում, ուստի հարկադրված արտասահմանից է ստացվում, գլխավորապես Լենինգրադի գործարանների համար:

Քարածուխ ներմուծված է միլիոն փթեթով\*.

1900	.	.	.	.	240
1904	.	.	.	.	201
1909	.	.	.	.	341
1910	.	.	.	.	259
1911	.	.	.	.	280
1912	.	.	.	.	324
1913	.	.	.	.	468

Հեղուկ հանքային վառելիքը մինչև 1911 թիվը համեմատաբար ավելի շատ էր գործածվում, քան ածուխը և միայն պատերազմի նախավերջին տարիներում քարածխի գործածությունն ավելի առաջ գնաց, քան նավթինը:

Նավթարդյունաբերությունը նավթի գներն է ավելացնում, իսկ հորեր փորելու աշխատանքն ընդլայնելուն ուղարկություն չի դարձնում:

Այսպիսով նավթի արդյունաբերությունը, նավթային թագավորների զուտ առևտրական նկատառումների հետևանքով, վոն թե ավելանում է, այլ սկսում է կրճատվել 1900 թ. սկսած:

Այսպես՝ նավթի արդյունահանությունը յեղել է միլիոն փթեթով\*\*.

1900	.	.	.	.	634
1905	.	.	.	.	461
1910	.	.	.	.	387
1911	.	.	.	.	559
1912	.	.	.	.	565
1913	.	.	.	.	562

\* «Статист. ежегодник».

\*\* Նույն տեղում:

**Մեծագի ար-  
գյուցաբերու-  
թյան անուամբ:** Քարածխային արդյունաբերությունից հետո ամենից արագ աճում է, իհարկե, մետաղինը, վոր սպասարկում է ինչպես իրեն, նույնպես և արդյունաբերությանը, տրանսպորտին, շինարարությանը, գյուղատնտեսությանը, ժողովրդի անմիջական կարիքներին: Յերկրագործական մեքենաների և գործիքների սպառումը Ռուսաստանում 1908 — 1913 տարիներում համարյա կրկնապատկվում է. 1908 թվին սպասվում է 66 միլիոնի, 1923 թ.՝ 109 միլիոնի: Մեքենաների դերը արդյունաբերության մեջ բնորոշվում է հետևյալ թվերով.

Ռուսաստանի (առանց հեռավոր ծայրամասերի) մեքենաների (տուրբինների, շոգեշարժիկների) կարողությունը ձևով ուժերով.

	1900 թ.	1908 թ.
Արտադրություններ	268,886	384,044
Բամբակեղենի ֆաբրիկաներում	55,285	80,848
Բրդեղենի	39,408	46,654
Վուշեղենի	42,423	71,995
Փայտի մշակման	153,500	176,312
Մետաղագործ. գործարանն.	7,786	14,887
Կենդ. մթերք. մշակման ֆաբր.		

Մետաղի պահանջը ավելի ու ավելի ուժեղանում է, և մետաղագործությունը, հատկապես հարավինը, շատացնում է չուգունի հալքը:

**Չուգունի հալքը միլիոն փթերով\*.**

Տարիներ	Ռուսաստանում		Սրա հաշվում՝	
	(առանց Լեհաստանի)	Հարավում	Ուրալում	Կենտրոնում և Վոլգայի շրջ.
1900	159	92	50	14
1905	151	103	41	5
1910	170	126	39	5
1911	198	148	45	6
1912	232	173	51	8
1913	257	190	56	12

\* В. Сараяянов. «Экономика и экономическая политика». «Статистич. ежегодник» 1913 г.

Չուգունի հալքն ավելանում է շնորհիվ այն հանգամանքի, վոր արտադրության մեջ սկսում են կիրառել ուժեղ հնոց-վառարաններ (դոմնա):

Մի հնոց-վառարանին (դոմնա) միջին հաշվով ընկնում է հալած չուգուն հազար փթերով\*.

	1904 թ.	1912 թ.
Հարավային ուայոնում	2405	3152
Ուրալի »	371	617
Կենտրոնում և Վոլգայի շրջ.	209	414

Չուգունի հալքի շատացման հետ աճում են նաև պատրաստի չերկաթի և պողպատի արտադրությունը:

**Պատրաստի պրանքի քանակը միլիոն փթերով\*\*.**

Տարիներ	Ամբողջ Ռուսաստանում (առանց Լեհաստանի)	Սրա հետ հաշված՝		
		Հարավ.	Ուրալում	Կենտր. և Վոլգ. շրջ.
1900	119	59	30	17
1905	127	68	33	16
1910	164	99	37	17
1911	180	113	37	17
1912	203	128	39	20
1913	219	141	41	21

Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների արտադրությունը միլիոն ուլերիներով\*\*\*.

Տարիներ	Միլ. ուլեր.
1900	12,1
1906	20,0
1910	44,0
1911	50,3
1912	52,6
1913	60,5

Մետաղա-արտադրության այլ ճյուղերից մատնանշենք. ա) Նավերի նորոգությունն ավելանում է 102% 1900 — 1908 թ. թ.

\* Сараяянов. «Экономика и экон. политика».  
\*\* » «Металл. промышленность России».  
\*\*\* Ձանազան աղբյուրներից բաղած:

բ) Ֆաբրիկա-գործարանների նորոգությունն ավելանում է 165%<sup>0</sup> նույն ժամանակաշրջանում.

գ) Մետաղաթելային-մեխի արտադրությունն աճում է 76%<sup>0</sup> ու: Մետաղա-արդյունաբերությունը վերամշակում է հանքանյութերը, ուստի և յերկաթահանքային ճյուղը ևս աճում է:

Հարավային ուսյունում արդյունահանված է յերկաթի հանքանյութ\*.

Տարիներ	Միլ. փուլ.
1900	210
1905	189
1910	260
1913	420

Այլ հանքանյութեր արդյունահանված են միլ. փթերով\*.

	1906	1910
Պղնձի	18,1	42,0
Արճիճ-արծաթի	0,25	2,45
Ցինկի	4,31	4,79
Ասբեստի	0,27	0,96

Տեխնիկական և արհեստագործական արդյունաբերության զարգացման ցուցանիշներ:

Հաշվանում է նաև թեթև և ծանր արդյունաբերության շուկան\*\*.

Բամբակեղենի արտադրութ. 1000 փթերով.

	1900 թ.	1908 թ.	1912 թ.
Սովորական մանվածք	14.052	17.744	20.680
Վիզոնի և այլ »	945	1.296	1.115
Վոլորուն թելի և այլ մանվ.	381	814	1.870
Աններկ (суровый)*** գործվ.	11.146	14.416	16.312
Յերփներանգ գործվածքներ	963	1.651	2.500

\* Չանագան արդյունաբերության քաղաք:

\*\* Статистический ежегодник» 1913 г.

\*\*\* Суровый — արբեր նշանակությամբ է գործածվում բիրտ, կոշտ, աններկ, անմշակ: Ծ. թ.

Բրդեղենի արտադրությունը հազար փթերով.

	1900 թ.	1908 թ.	1912 թ.
Չանագան մանվածքներ	3.370	4.287	4.875
Անմշակ (суровый) ապրանք	3.252	3.589	4.546
Մշակված (отделочный) »	3.529	3.864	4.709

Վուշեղենի արտադրությունը հազար փթերով.

	1900 թ.	1908 թ.	1912 թ.
Վուշի մանվածքներ	2336	3056	3226

Թղթի արդյունաբերության արտադրությունը յերեւելում է հեռույալ թվերից.

Տարիներ	Միլիոն ուբլ.
1890	19,1
1900	39,7
1911	57,5

Բերած թվերը բնորոշ են ամբողջ ուղևորական արդյունաբերության նկատմամբ. նրանք ցուցադրում են արտադրության կենտրոնացումը խոշոր ձեռնարկությունների մեջ:

Ողեքաշական գործարաններն ուժեղացնում են իրենց արտադրությունը 1906—1911 թ. թ. ընթացքում, 92 միլիոն դոլլից հասնում են 124 միլիոն դոլլ արտադրության. գարեջրային գործարանները՝ 72 միլիոն դոլլից (1906 թ.) մինչև 89 միլիոն դոլլի (1911 թ.):

Պատրաստի ծխախոտ մշակված էր.

	1900 թ.	1910 թ.	1914 թ.
Բարձր տես. ծխախ. 1000 փ.	1881	689	731
Մախորկա » » »	2033	4241	5744
Պապիրոսներ միլիոն հատ	8,6	16,7	29,8
Ընդհանուր քաշը հազար փ.	4166	5804	7374

Ռուսական արդյունաբերության 1900—1913 թ. թ. աճման տոկոսը վորոշելու համար պակասում են վիճակագրական տվյալներ 1908 թ-վից, վորովհետև կառավարությունը պաշտոնական տեղեկագրեր չէր հրատարակում: Միայն խորհրդային պետությունն է, վոր գերծ լինելով

մասնատիրական առևտրական գաղտնիքներից, մեծ զարկ է տալիս հանրապետական վիճակագրությունը:

Մեր բերած տեղեկությունների վրա հենվելով ստանում ենք հետևյալ պատկերը. յեթե 1900 թվի արտադրությունն ընդունենք 100.

	1900 թ.	1913 թ.
Քարածխի արդյունահանությունը	100	224
Նավթի »	100	89
Զուգուների հալքը	100	162
Յերկաթի և պողպատի պատրաստի արդյունքները	100	184
Գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ	100	500
Յերկաթի հանքանյութի արդյունահանությունը հարավում	100	200
Պղնձի » »	100	377
Ասբեստի » »	100	355
Բամբակեղեն.	1900 թ.	1913 թ.
Սովորական մանվածք	100	141
Վոլորուն թելի »	100	491
Բիրտ գործվածք	100	146
Յերփներանգ »	100	259
Բրդեղեն.	1912 թ.	1913 թ.
Մանվածք	100	145
Բիրտ ապրանք	100	140
Սշակված (отделочный) ապրանք	100	134
Ջուշի մանվածք	100	138
Չանազան.		
Թղթի արտադրություն	100	145
Շաքարի »	100	292
Ծխախոտի և մախորկալի արտադրութ.	100	177

Արդյունաբերության բուռն զարգացման հետ աճում է նաև բանվոր դասակարգը: 90-ական թվերի սկզբում գոյություն ունեյին բանվորական խմբեր միայն արդյունաբերական կենտրոններում՝ Պետերբուրգում, Մոսկվայում, Կիևում, Ռիգայում, Վիլնայում, Մինսկում, Գոմելում, Խարկովում, Կոստրոմայում, Վլադիմիրում, Իվանովովոգոնեսենսկում, Դոնի Ռոստովում, Ուդեսսայում, Տուլայում, Կազանում, Նիժնի-Նովգորոդում, Սարատովում: Այդ ժամանակաշրջանում ահա ամրապնդվում է բանվոր դասակարգը, և 1898 թվին ստեղծվում է Ռուսաստանի Սոց. Դեմոկրատական Բանվորական Կուսակցությունը: 1903 թ. արդեն վերջնականապես ձևավորվում է Ռ. Ս. Դ. Բ. Կուսակցության մեջ բալլչևիզմը:

1905 թվին — հեղափոխություն. ապա արդյունաբերության բարգավաճման գուզընթաց — ռեակցիա: Պատերազմի նախորեյին բանվորական շարժումը կառավարության համար դառնում է սպառնալից: Այսպիսով գործնականում արդարանում է մարքսիզմի թեորիան, ըստ վորի տեխնիկան ու տնտեսական կյանքն են բնորոշում դասակարգային պայքարի բնույթն ու չափը:

1900-ից շարունակվում է նաև յերկաթուղադալին տրանսպորտի զարգացումը, բացարձակ թվերով ավելի դանդաղ, իսկ հարաբերապես ավելի արագ, քան 90-ական թվերին: 1890 — 1900 թ. թ. շինվել են նոր յերկաթուղադադեր 23.000 վերստ. 1900 — 1910 թ. թ. — 13.900, իսկ 1910 — 1913 թ. թ. — 3.400 վերստ:

Յերկու տասնամյակների շինարարության այս մեծ տարբերությունը բացատրվում է նրանով, վոր 90-ական թվերի վերջում է տեղի ունենում ասիական գաղութների՝ Թուրքեստանի և Սիբիրի յերկաթուղային միացումը Ռուսաստանի կենտրոնի հետ: Բուն ուսսական յերկութուղա-

գծային շինարարությունը 90-ական թվերին ծավալվում է բուն թափով:

Նոր յերթեկություն սկսվում է վերստերով

Տարիներ	և վերստերով
1881—1885	2941
1886—1890	4280
1891—1895	6214
1896—1900	15081
1901—1905	7361
1906—1910	4901
1911—1913	2928

1900 թվի սկզբին գծերի տարածությունը 46,535 էր, իսկ 1914 թվի սկզբին՝ 64,847, այսպիսով ավելացել էր 39%:

Սակայն տրանսպորտի աշխատանքը չպետք է չափեր միայն գծերի շինարարությամբ. անհրաժեշտ է հաշվի առնել նաև նրա շահագործումը:

Այդ տեսակետից շատ բնորոշ է կառավարության քաղաքականությունը, վոր ձգտում էր ավելացնելու ապրանքաշրջանառությունը:

Այսպես՝ սկզբում մեր վագոնների տարողությունը 750 փուֆ էր, ապա հասցրին 900, 1000 փթի: Իրա համեմատել սկսեցին կրճատել վագոնների պատվերները, բայց տնտեսական բուն կյանքի աճումը դեմ գնաց այդ քաղաքականությանը:

Վագոններ շինվել էին

Տարիներ	Շոգեկառ	Ապրանքատար	Մարդատար	Ընդամենը
1906	1281	11,362	378	22,740
1907	755	14,892	221	15,113
1908	641	9,520	995	9,915
1909	514	3,155	2334	5,489
1910	495	7,967	1090	9,057
1911	416	7,206	1652	8,858
1912	306	9,937	1551	11,488
1913	535	18,994	1435	20,428

Ապրանքների տեղափոխությունը փոքր արագությամբ ջերկում է հետևյալ թվերից.

Տարիներ	Միլիոն ուղի.
1890	197
1895	275
1900	406
1905	505
1910	645

Զուտ արդյունք մեկ վերստի վրա ընկնում էր.

Տարիներ	Ռուբլի
1907	2540
1908	2750
1909	4350
1910	5600
1911	6910
1912	7420
1913	7640

Զույն օրան. Տնտեսական բուն կյանքի ազդեցության արտի աճումը: թյան տակ նույնիսկ ջրային ճանապարհները հատուկ ուշադրության արժանացան: Նշանակալիցն այն է, վոր նրանց կարգավորելը հնարավոր էր միայն կառավարության աջակցությամբ. իսկ ցարական կառավարությունը սիրով չէր հանձն առնում նախաձեռնությունը այնպիսի աշխատանքների, վորոնցից անմիջական ոգուտ չէր սպասվում: Այնուամենայնիվ «մեր ներքին ջրային ճանապարհների անբարեկարգ վիճակը, գրում է Ոպենգեյմը\*, հարկադրեց, XX դարի սկզբում, պետական իշխանությունը ուշադրություն դարձնելու նրանց վրա. հետևանքն այն յեղավ, վոր սկսեցին մի շարք խոշոր և վարկոր աշխատանքներ այդ ուղղությամբ. ամբարտակեցին Ոկա գետը Կոյունայից մինչև Ռյզգան, Դոնեցը, ուղղացրին Վիսլայի Ավստրիային սահմանակից մասը և նրա

\* «Россия в дорожном отношении». Опенгейм. Изд. ВСНХ. 1920.

Նեչալից մինչև պրուսական սահմանը գտնվող մասը, բարեկարգեցին Դնեպրի ստորին մասի նավարկութան պայմանները՝ Ալեքսանդրովկայից մինչև գետաբերանը և ելի ուրիշ միջանի աշխատանքներ. բացի սրանից ուժեղացրին հողեհան կարավանների գործունեությունը, այնպես վոր մեր դարի առաջին տասնամյակի վերջում խորացնող հրանոթների թիվն ավելացել էր  $\frac{2}{3}$  անգամ, իսկ դրանց մի ժամյա արտադրողականությունը՝  $1\frac{1}{2}$  անգամ»:

Ապրանքների տեղափոխությունը ներքին ջրային ճանապարհներով տարեցտարի ավելանում էր (միլ. վթերով).

Տարիներ Յեվր. Ռուսաստանում Ասիական Ռուսաստ. Լաստեր Յեվր. Ռուսաստ.	1906	2073	85	314	հազ.
	1907	2198	117	336	»
	1908	2205	116	378	»
	1909	2552	109	349	»
	1910	2802	139	364	»

Ծովային նավատորմի դը ևս առաջ է գնում.

Տարիներ	Նոգենավեր	Տոննաժ	Ինդիկատոր ուժերի
Նավերի թիվը	(հազ. տոնն)	թիվը	հազարն.
1900	723	297	390
1905	835	376	451
1910	924	459	565
1911	943	463	593
1912	1015	488	631

Տոննաժը 1900-ից մինչև 1912 թ. ավելանում է  $64\frac{0}{100}$  :

Առանձնապես բարձրանում է ապրանքների ծովային տեղափոխությունը արդյունաբերության և նրա արտադրանքների պահանջի հետևանքով:

1900-ից սկսած տրանսպորտը նկատելիորեն աճում է, բայց վոչ այն չափով, ինչպես արդյունաբերությունը:

Փողովրդական Ռուսաստանի առանձնահատուկ դրությունը—հսկայական տարածություններ, նոսր բնակեցում, վոր հնարավորություն չէր տալիս շինած ճանապարհները լիապես խորեյից: ոգտագործելու, չերկրի մեջ խոշոր տեղ բռնող բնատնտեսության մնացորդներ—այդ ամենը հար-

կադրում էլին հայրենի և արտասահմանյան կապիտալները մտցնելու վոչ թե տրանսպորտի, այլ արդյունաբերության մեջ:

Նույն այդ պատճառներով ինչպես յերկաթուղագծային, նույնպես և գետային, ծովային տրանսպորտները— թեև աճում էլին, բայց ավելի դանդաղ, քան արդյունաբերությունը:

Ավելի դանդաղորեն փոփոխվում էր գյուղի տեխնիկան և տնտեսությունը:

Մասնանշելով այս դանդաղաշարժությունը, մենք մեր ուշադրությունը դարձնում ենք այն բանի վրա, թե գյուղատնտեսությունը բարգավաճող կապիտալիզմի հարվածների տակ ինչ ուղղություն է դարձանում: Այս հարցը չափազանց հետաքրքիր է այն տեսակետից, վոր ռուսական գյուղը, տարբեր արևմտա-չեկոսլավականից, ապրում է առանձնահատուկ դրություն. այնտեղ կապիտալիզմի բարձր ձևերը կենակցում են միջնադարյան ֆեոդալիզմի հետ:

Ֆեոդալական դաժան ձևերի գոյությունը չէ, վոր բացատրվում է մեր գյուղացու մասնակցությունը պրոլետարական հեղափոխությանը: Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, վոր Ռուսաստանի գյուղատնտեսությունն մեջ մուտք են գործել կապիտալիստական տարրերը՝ շուկայից թարկվածություն, դասակարգային շերտավորում, ապրանքառուների և վաշխառուների մուտքը և այլն: Այս բոլոր տարրերը XX դարում հասան դարգացման այն աստիճանին, վոր վաղեմի նահապետական բնատնտեսական գյուղի մասին այլևս խոսք չէր կարող լինել:

Ռուսաստանում ստեղծվեց մի տարրինակ պատկեր:

Մի կողմից՝ կապիտալիզմը ճեղք բաց արեց գյուղատնտեսության բնատնտեսական կառուցվածքի մեջ յեվ գյուղ տարավ մեքենաներ, վարկ, նոր մշակույթներ, կուլակ յեվ շարաշահող կալվածատեր. մյուս կողմից՝ թեվակոխող

կապիտալիզմը գյուղում գտավ լիակատար անգրագիտութիւն, յեռադաշտյան սիստեմ հիսուն փթանոց (մի դեպիատինից) ընդհատվում յասք, ըարչչինային (քեզառային) հպատակութիւն, վախ յեվ ատելութիւն դեպի իշխանութիւնն ու կալվածատերը:

Կապիտալիզմն ստեղծեց ուսական գյուղում կրկնակի շահագործում աղքատ և միջակ գյուղացիութեան նկատմամբ: Գյուղում ստեղծվում է տիպիկ գաղութային ուժիմ, յերբ տեղացին սովորաբար կրում է ներքին յեվ արտաքին (քաղաք-գյուղ) դասակարգային հակամարտութիւնների կրկնակի լուծը: Առաջ գյուղացին աշխատում էր միայն կալվածատերի համար, այժմ և՛ կուլակի, և՛ ապրանքաուղի, և քաղաքի համար:

Այս ամենը մենք դիտել ենք նաև արևմտյան կապիտալիստական յերկրներում, բայց վոչ մի տեղ, ինչպես Ռուսաստանում, միաժամանակ ապրող ֆեոդալիզմի և կապիտալիզմի կոնտրաստն այսպես մեծ չէ յեղել. վոչ մի տեղ յերկու իրար ժխտող հին ու նոր սկզբունքների այսպիսի խճճում չենք տեսնում:

Այսպես էր իրերի դրութիւնը ուսական գյուղում պատերազմի սկզբին: Կապիտալիզմը բեկում առաջացրեց և՛ քաղաքում, և՛ գյուղում, և՛ գործարանում, և՛ դաշտում, և՛ տրանսպորտում: Նա փոփոխեց նույնպես բնույթը այն կապի, վոր ուներ Ռուսաստանը կապիտալիստական Արևմուտքի և ֆեոդալական Արևելքի ու Հարավի հետ:

Արտաքին առևտուրը լուրջ բեկումներ ունեցավ: Ամենից առաջ նա խիստ աճեց.

Մ ի լ ի ո ն ո ու բ լ ի ն ե Ր ո վ  
տ ա ր ե կ ա ն

Տարիներ	Արտահան.	Ներմուծութ.	Ընդհ. շրջանառ.
1898—1902	739	617	1356
1903—1907	1046	723	1769
1908—1912	1397	1047	2444
1912	1518	1171	2689
1913	1520	1374	2894

Ռուսաստանը՝ իբրև կապիտալիստական յերկիր ավելի ու ավելի սերտ կապ է հաստատում աշխարհի ուրիշ տնտեսութիւնների հետ: XX դ. տարիներում մինչև պատերազմը Ռուսաստանի միջազգային կապերն ավելի արագ էին աճում, քան նրա արդյունաբերութիւնը:

Խիստ կերպով փոխվում է նաև այդ կապի բնույթը. արտահանվում էին գյուղատնտեսութեան ավելի բարձր կուլտուրական ձևերի մթերքներ և ներմուծվում արդյունաբերութեան համար անհրաժեշտ նյութեր, գործիքներ:

Այսպես, որինակ, հաճարի եքսպորտն ընկավ, իսկ ցորենինը՝ բարձրացավ, ցորենի ալյուրն ավելի արագ տեւպով էր արտահանվում, քան ցորեն հացահատիկը. խիստ մեծացավ վուշի, ծխախոտի և այլ կուլտուրական մթերքների արտահանութիւնը. նույնպես բարձրացավ ձվի, մորթած թռչունների, մսի, յուղի, կաշվի եքսպորտը. արդյունաբերութիւնն ուժեղացրեց փայտի, տախտակի, հանքանյութի, մետաղների, սպիրտի, բամբակեղենի, ռեզինի, մետաղի շինվածքների արտահանութիւնը:

Ներքեում մենք տալիս ենք ուսական արտահանութեան մանրամասն թվական բնութագիրը, վորովհետև Ռուսաստանի այլ կապիտալիստական յերկրների հետ ունեցած կապի խնդիրը շատ խոշոր նշանակութիւն ունի ուսական հեղափոխութեան ուղիներն ու բնույթն ըմբռնելու համար:

Ռուսաստանի եքսպորտը միլիոն ուրլիններով.

	1901 թ.	1913 թ.	Տոկոսային ավելացում
Ցորեն . . . . .	22	235	84
Հաճար . . . . .	56	32	—
Գարի . . . . .	17	186	295
Ցորենի ալյուր . . . . .	6	17	183
Հաճարի ալյուր . . . . .	8	7	—
Ծխախոտ և ծխախոտային շինվածքներ . . . . .	3	10	233
Վուշ . . . . .	44	86	95
Կանեփաթել (пенька) . . . . .	11	23	109

	1901 թ.	1913 թ.	Տոկոսային ավելացում
Զբիթային սերմեր . . . . .	11	21	91
Խոզեր . . . . .	3	8	167
Զվեր . . . . .	35	90	157
Կովի չուղ . . . . .	26	71	173
Ընտանի մորթած թռչուններ	2	6	200
Բուրդ . . . . .	5	10	100
Կաշի . . . . .	13	54	315
Փայտեղեն . . . . .	57	165	189
Յերկաթ . . . . .	0,1	3	2000
Մարգանց . . . . .	4	14	250
Մետաղներ . . . . .	1,6	7	337
Շաքար . . . . .	17	27	59
Սպիրտ, խմիչքներ և այլն	0,9	5,8	544
Բամբակեղենի շինվածքներ	17	44	159
Բրդեղենի »	1,6	2,6	62
Ռեզինի »	2	5,8	190
Մետաղի »	2	8	300

Յեթե հաշվի առնենք, վոր եքսպորտը 1901—1913 տ. ա. ավելացել է 100<sup>0</sup>/<sub>0</sub>, ապա կտեսնենք, վոր հիշած շինվածքները (արդյունաբերական և ապրանքա-գյուղատնտեսական) չափազանց առաջ են զնացել: Իսկ մնացած ապրանքներն, ուրեմն, 100<sup>0</sup>/<sub>0</sub>-ից պակաս են բարձրացել: Ինչ վերաբերում է գյուղատնտեսական արտահանվող ապրանքներին, պետք է պարզորեն ասել, վոր ավելի ու ավելի շատ արտահանվում են տնտեսության բարձր ձևերի միջերջները:

Գալով արդյունաբերական շինվածքների եքսպորտին, պետք է ասենք, վոր հարցին վոչ լաջն ծանոթ մեկը կարող է ընկնել տարակուսանքի մեջ:

Իհնչպես, հիրավի, մինոր կապիտալիստական յերկիր կարող է արտահանել բամբակեղենի, ռեզինի և նույնիսկ

մետաղի շինվածքներ, յերբ Արևմտյան Յեվրոպայի խոշոր կապիտալիստական յերկրները և Միացյալ Նահանգները նույն բաներն արտադրում են վոչ միայն ներքին, այլև դրսի շուկայի համար: Այս տարակուսանքն անմիջապես վերանում է, յերբ ի նկատի յենք առնում, վոր Ռուսաստանի արտահանությունը կատարվում էր դեպի ասիական յերկրները:

Որինակ, սպիրտ արտահանվել է 1913 թ. Թյուրքիա և Զինաստան 177 միլիոն աստիճան, իսկ Յեվրոպա միայն 78 միլ. աստիճան: Մետաղի շինվածքներ արտահանված են 4,4 միլ. փութ Զինաստան, Պարսկաստան և Թյուրքիա, իսկ Յեվրոպա՝ միայն 1,4 միլ. փութ. տեքստիլ շինվածքներ արտահանվել են միայն Պարսկաստան և Զինաստան:

Ռուսաստանը մի կողմից դարձել էր պետութուն-գաղութ յեվ կապիտալիստ մրցակից կապիտալիստական յերկրների համար, մյուս կողմից՝ զարգացած կապիտալիստական յերկիր Ասիայի համար: Այս մոմենտը պետք է լավ միտը պահել, վորովհետև նա խոշոր դեր է խաղում մեր հեղափոխության պատմության, Խ. Ս. Հ. Մ.-ի կապիտալիստական յերկրների և Արևելքի հետ ունեցած փոխհարաբերությունների մեջ:

Նույնքան նշանակալից են նաև իմպորտի տվյալները: Ռուսաստանի կապիտալիզմի զարգացման հետ աճում և բազմազանվում են ռուսական հասարակության պահանջները: Հետևանքն այն է լինում, վոր ուժեղ կերպով ներմուծում են սուրճ, կակաո, թեյ, մրգեր, ընկուզեններ, գործվածքներ, գրենական պիտուլքներ, հեծանիվներ և այլն: Մենդային արդյունաբերության աճման հետ ավելանում է նաև համապատասխան սերմերի և բույսերի ներմուծումը: Արդյունաբերության մյուս ճյուղերի համար ներմուծվում է՝ կաուչուկ, գուտապերչ, չուղեր, կաշվեղեն, բամբակ, քարածուխ: Արագորեն սաստկանում է

մեքենաների և գործիքների ներմուծումը արդյունաբերութ-  
յան և գյուղատնտեսութան համար:

Ներմուծված միլ. ուրբլ. Հավելում  
1901 թ. 1913 թ. տոկոսներով

Սուրճ . . . . .	3	9	200 <sup>0</sup> / <sub>0</sub>
Կակաո . . . . .	1	3	200 <sup>0</sup> / <sub>0</sub>
Կաուչուկ, գուտապերչ, կամեդի . . . . .	20	43	115 <sup>0</sup> / <sub>0</sub>
Կուպր, սկիպիդար, տերպենտին . . . . .	2	6	200 <sup>0</sup> / <sub>0</sub>
Փափուկ իրեր (рухлядь)	7	16	129 <sup>0</sup> / <sub>0</sub>
Կաշվեղեն . . . . .	5	21	320 <sup>0</sup> / <sub>0</sub>
Քարածուխ և կոքս . . . . .	21	87	314 <sup>0</sup> / <sub>0</sub>
Մեքենաներ և ապարարաններ	57	169	196 <sup>0</sup> / <sub>0</sub>
Բուրդ . . . . .	18	60	238 <sup>0</sup> / <sub>0</sub>
Բամբակեղեն մանվածք	4,8	10	108 <sup>0</sup> / <sub>0</sub>
Բամբակեղենի շինվածքներ	6	15	150 <sup>0</sup> / <sub>0</sub>
Բրդի և այլ »	8	17	112 <sup>0</sup> / <sub>0</sub>
Մետաքս, հում բոժոժներ	11	31	182 <sup>0</sup> / <sub>0</sub>
<b>Ընդամենը</b>	<b>593</b>	<b>1161</b>	<b>96<sup>0</sup>/<sub>0</sub></b>

Մեր ներմուծումը միայն Յեվրոպայից չէ: Բամբակն  
ու շուտը Ռուսաստանն ստանում էր Պարսկաստանից և  
Հնդկաստանից, չոր միրգն ու պտուղները՝ Պարսկաստա-  
նից և Թյուրքիայից, բրինձը՝ Պարսկաստանից, Թյուրքիա-  
յից, Հնդկաստանից և Չինաստանից:

Մեր ներմուծումը Պարսկաստանից, Հնդկաստանից,  
Թյուրքիայից և Չինաստանից կազմում էր ընդհանուր իմ-  
պորտի 13<sup>0</sup>/<sub>0</sub>:

Միջ-պատերազ-  
մյան Ռուսաս-  
տանի արդյունա-  
բերական զար-  
գացման ընդհա-  
նուր պատկերը:  
Մեղ թվում է, թե բերած թվերը միան-  
գամայն բավական են՝ համոզվելու համար,  
թե ինչպես արագ էր ընթանում Ռուսաս-  
տանի կապիտալիստական զարգացումը,  
սկսած 90-ական թվերից մինչև պատե-  
րազմը: Այս թվերը մի այլ բան էլ են ասում. իրավես  
Ռուսաստանը ձեռք է բերում բարձր վորակի կապիտա-


լիստական հիմնաշենք (բազիս), բայց վոչ շատ բարձր  
քանակապես:

Յեթե ըննութան առնենք մինչ-պատերազմական  
Ռուսաստանն ըստինքյան, առաջին հերթին կգարմանանք  
նրա մեջ գործող հակասութունների հզորութանը. ֆեո-  
դալիզմ և կապիտալիզմ գյուղում, կապիտալիզմի բարձր  
ձև և մանր ու միջակ արդյունաբերություն քաղաքում:

Այստեղից բխում է նրա պետական ձևերի ինքնատի-  
պութունը, իդեոլոգիաների հազվագյուտ հակամարտու-  
թյունը, նրանց յուրահատուկ շփոթումը, խաչավորումը,  
«համաձայնականությունը», ինչպես նաև այս վերջինիս  
համեմատաբար արագ չքացումը:

Այստեղից բխում է նաև Ռուսաստանի ինքնատիպ  
վերաբերմունքը Յեվրոպայի և Ասիայի այլ յերկրներին՝  
Ինքնատիպություն, վոր չեղել է արևմտա-յեվրոպական  
հասարակությունների պատմության մեջ, միայն այլ ձևվե-  
րով, քան այն, ինչ մենք դիտում ենք Ռուսաստանում:

Ըստ ՍՍՐՍՖՅՍՆԱՎԷ



## Հ Ա Ր Ց Ե Ր .

1. Ինչո՞վ ե բացատրվում Ռուսաստանի տնտեսական գրու-թյան, ինչպես նաև Հոկտեմբերյան հեղափոխության ու նրա զարգացման տարբեր փուլերի (ռազմական կոմունիզմ, «ՆԵՊ») առանձնահատուկ գրությունը:
2. Ի՞նչ թափով ե ընթանում Ռուսաստանի կապիտալիզմի զարգացումը XIX դարի II կիսում և XX դարում:
3. Կազմեցեք համեմատական դիագրամաներ, կորզձեր յերկու ժամանակաշրջանների ծանր ինդուստրիայի, լեռնային արդյունաբերության, տրանսպորտի և կապի, արտաքին առևտրի և բանվոր դասակարգի զարգացման:
4. Ի՞նչ բնորոշ կողմեր կան արդյունաբերական տարբեր ճյուղերի զարգացման մեջ. որինակ՝ ինչո՞ւ 1900-ից սկսած կըր-ճատվում ե նավթի արդյունահանությունը. ինչո՞ւ վերջ տարի-ներում խիստ կրճատվում ե վագոնների կառուցումը. ի՞նչ փոխ-հարաբերություն գոյություն ունեն աներաժվող և արտաձվող մթերքների միջև. արդյունաբերական ձեռնարկությունները կենտրոնանում են, թե հակառակը. ինչո՞վ են բացատրվում յերկա-թուղազձային շինարարության թռիչքները տարբեր տասնամյակ-ներում և այլն, և այլն:
5. Ինչո՞վ ե պայմանավորվում դասակարգային պայքարի բնույթն ու չափը (մարքսիզմ):
6. Ի՞նչ փոփոխություններ մտցրեց կապիտալիզմը գյուղում:
7. Կազմեցեք դիագրամա հացի և այլ բույսերի բերքա-տվություն:
8. Գյուղի եքսպրոպրիացիան նրա վճիռ խավերի հաշվին ե կատարվում և ի՞նչ չափով:
9. Բնատնտեսական գյուղի քայքայումն ու կապիտալիս-տական տարրերի մուտքն այնտեղ:
10. Ի՞նչ պատճառով առանձնապես սրվեց քաղաքի և գյուղի հակամարտությունը:

11. Ի՞նչն ե ուսական գյուղի զարգացման դանդաղաշար-ժության պատճառը:
12. Ի՞նչն ե կազմում ուսական գյուղի առանձնահատուկ-թյունը արևմտա-յեվրոպական գյուղի զարգացման հանդեպ:
13. Կապիտալիզմն ի՞նչպես կրկնակի շահագործում մտցրեց գյուղում:
14. Հայրենի և ոտար կապիտալներն արդյունաբերական վճիռ ճյուղերում եյին ավելի մտցնում:
15. Ի՞նչպիսի բնույթ ունեն ուսական կապիտալիզմը վո-րակի և քանակի տեսակետից:
16. Վորո՞նք են ուսական կապիտալիզմի հակասություն-ները:
17. Ինչո՞վ են պայմանավորված իդեոլոգիաների ինքնատի-պությունը, շփոթությունն ու «համաձայնականությունը»:
18. Ինչո՞վ ե բացատրվում Ռուսաստանի տարբեր վերա-բերմունքը արևմտա-յեվրոպական և ասիական յերկրներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Արդյունաբերության զարգացումը XIX դարի

2-րդ կիսում

3—10

Արդյունաբերակ. կապիտալիզմի աճումը 90-ական թվերին	3
Ծանր ինդուստրիայի աճումը . . . . .	4
Լեռնային արդյունաբերության աճումը . . . . .	6
Բաժնետիրական ընկերությունների աճումը . . . . .	7
Տրանսպորտի և կապի զարգացումը . . . . .	8
Արտաքին առևտրի աճումը . . . . .	9
Կապիտալիզմը գյուղում . . . . .	10

Արդյունաբերության զարգացումը XX դարում

մինչ համաշխարհային պատերազմը

12—29

Ծանր ինդուստրիայի աճումը . . . . .	12
Լեռնային արդյունաբերության աճումը . . . . .	12
Մետաղի արդյունաբերության աճումը . . . . .	14
Տեքստիլ և միջանի այլ արդյունաբերությունների աճումը	16
Արդյունաբերության աճումը 1900—1913 տարիներում . .	18
Բանվոր դասակարգի աճումը այդ ժամանակաշրջանում . .	19
Յերկաթուղային տրանսպորտի աճումը . . . . .	19
Ջրային տրանսպորտի աճումը . . . . .	21
Փողովբզական տնտեսության ընդհանուր պատկերը պատե- րազմի նախորդին . . . . .	22
Արտաքին առևտուրը այդ շրջանում . . . . .	24
Մինչ-պատերազմյան Ռուսաստանի արդյունաբերական զարգացման ընդհանուր պատկերը . . . . .	28

« Ազգային գրադարան



NL0209733

29185